37
V-26

MAR

ԱԽՍՀ ԼԺԿ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԱՐԿԵՎԱՐՄԱՆ ՑԵՎ ՀԵՌԿԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

37
Մ-26

Հրատարակություն ԱԽՍՀ Լուսժողկոմատի
Բաքու 1939

24 JUN 2013

Խմբագրեց Գ. ՔԱՐԱՄՅԱՆ
Սրբագրեց Ս. ԴԱՍՊԱՐՅԱՆ

ՀՍՍՀ-ՅՍՍՌ Ա. Մ. Գորկու անվան գրքերի պետական հանրային գրադարան

Сдано в набор 17/II-1939 г.
Разрешено к печати 4/IV-1939 г.
2 печ. л. 93.696 тип. зн.

Главлит № 1013. Заказ № 480 Тир
Типография „Красный Восток". Баку, ул. Юного пионер

2975
39
44.634
37
Ш-26
Ա4

Հաստատված է ԽՍՀՄ-ի ժողկոմխորհին կից Բարձրագույն դպրոցի գործերի համամիութենական կոմիտեի կողմից 1938 թ. ոգոստոսի 18-ին։

ՆԱԽԱԳԻԾ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ժամանակի բաշխումն ըստ թեմաների.

Մաս	1. Մանկավարժության ընդհանուր հիմունքները	6 ժամ
»	2. Յերեխաների դաստիարակումը մինչ դպրոցը	4 »
»	3. Դպրոցական հասակի յերեխաները	4 »
»	4. ԽՍՀՄ-ի պետական քաղաքականությունը ժողովրդական լուս. ասպարիզում և դպրոցը	4 »
»	5. Կրթության և ուսուցման թեորիան (դիդակտիկա)	30 »
»	6. Դաստիարակության թեորիան	12 »
»	7. Պիոներական և կոմյերիտական կազմակերպությունը դպրոցում, աշակերտական կազմակերպությունները	4 »
»	8. Դպրոցը և ընտանիքը	4 »
»	9. Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքն աշակերտների հետ	4 »
»	10. Խորհրդային դպրոցի ուսուցիչը	4 »
»	11. Դպրոցավարություն	4 »
	Ընդամենը	80 ժամ

ՀԱՄԱՌՈՏ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Ծրագրի նախագիծը առանձնացնում է հատուկ բաժնում «կոմունիստական դաստիարակության նպատակը» թեման, որպես խորհրդային մանկավարժության դասընթացի հետագա կառուցվածքի վորոշողը։

Այդ թեմայում մանրամասն շարադրվում է մարքսիզմի-լենինիզմի հիմնադիրների ուսմունքը նոր մարդու՝ կոմունիստի դաստիարակության մասին, մտցվում է ստալինյան եպոխայի նոր մարդկանց բնութագրությունը և տրվում է մարքս-լենինյան ուսմունքը մարդկային անձի զարգացման մասին։

Հետևյալ թեման, վորը սերտորեն կապված է նախորդի հետ, հանդիսանում է «խորհրդային յերեխաները» թեման։

Յերեխան իր գոյության առաջին տարիներից սկսած՝ նախադպրոցականը և մանավանդ դպրոցականը պետք է ուշադրությամբ ուսումնասիրվի մանկավարժների կողմից։

«Խորհրդային յերեխաները» թեմայից անմիջապես հետո տրվում է «ԽՍՀՄ-ի պետական քաղաքականությունը ժողովրդական լուսավորության ասպարեզում և դպրոցը» թեման։ Այդ թեման շարադրում է Լենինի-Ստալինի ցուցմունքները և կուսակցական վորոշումները դպրոցի մասին, Համկ(բ)կ ծրագրի պահանջները ժողովրդական կրթության ասպարեզում, խորհրդային դպրոցի կառուցման հիմնական սկզբունքները և ներառում է ուսանողին կրթության, ուսուցման և դաստիարակության թեորիաների ուսումնասիրության մեջ։

Ուսուցումը և դաստիարակությունը—միասնական մանկավարժական պրոցես է, այնուհանդերձ լինելով այդ պրոցեսի մանրամասն և բազմակողմանի ուսումնասիրության շահերից, նախագիծն առանձին գլուխներում դիտում է այդ պրոցեսի տարբեր կողմերը—ուսուցումը և դաստիարակությունը։

Ծրագրի նախագծում զգալիորեն ծավալված է «դաստիարակության թեորիան» թեման։ Այդ թեմայի մանրամասն զարգացումը բղխում է նրա մեջ մի շարք նոր մոմենտներ մտցնելու անհրաժեշտությունից։

«Խորհրդային ուսուցիչը» թեման տրվում է 10-րդ գլխում, յերբ արդեն ուսանողները յուրացրած կլինեն խորհրդային մանկավարժության կողմից ուսուցչին առաջադրած հիմնական պահանջները։

Դպրոցական դիդիենիայի խնդիրները մանկավարժության ծրագրի մեջ չեն մտցվում։ Դպրոցական դիդիենան դասավանդվում է մանկավարժական բարձրագույն ուսումնական հաստատություններում վորպես ինքնուրույն առարկա։

ՄԱՍ I

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մանկավարժության առարկան
2. Մանկավարժության փիլիսոփայական հիմունքները.
3. Կոմունիստական դաստիարակության նպատակը.
4. Մանկավարժության աղբյուրները.
5. Գիտական-մանկավարժական հետազոտության մեթոդները.
6. Մանկավարժությունը և մյուս մանկավարժական գիտությունները։

1. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Գիտության մարքսիստական բնորոշումը։ Խորհրդային մանկավարժությունը գիտություն և հասունացող սերնդի կոմունիստական դաստիարակության, կրթության և ուսուցման մասին։ Դաստիարակության պատմական և դասակարգային բնույթը։

Դաստիարակություն, կրթություն և ուսուցում հասկացողությունների բովանդակությունը։ Մանկավարժության կուսակցականությունը։

Խորհրդային մանկավարժության հիմնական բովանդակությունը։

Մանկավարժությունը վորպես գիտություն վերացնելու հակամարքսիստական փորձարկումները.—մանկաբանական կեղծ-գիտությունը, վուլգար «ռեֆլեքսոլոգիական» ուղղությունը մանկավարժության մեջ, «դպրոցի մահացման» հակալենինյան թեորիան, մանկավարժությունն արհամարհաբար «եմպիրիկա» և «գիտությունակերպ դիսցիպլին» հայտարարելը։

Մանկավարժության և մանկավարժների իրավունքների լիակատար վերականգնումը, Համկ(բ)կ ԿԿ վորոշումը լուսժողկոմատների սիստեմում մանկաբանական աղավաղումների մասին։

2. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Դիալեկտիկա-մատերիալիստական փիլիսոփայությունը—խորհրդային մանկավարժության մեթոդոլոգիական հիմքը։ Դիալեկտիկական մատերիալիզմի մեթոդը որպես մանկավարժության թեորիայի կառուցման միակ գիտական հիմքը։

Բուրժուական մանկավարժության փիլիսոփայական հիմունքների քննադատությունը։

3. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մարքսիզմի-լենինիզմի հիմնադիրները նոր մարդկանց—կոմունիստների դաստիարակության մասին։ Նոր մարդու իդեալը. մարքսիզմի-լենինիզմի հիմնադիրները—Մարքսը, Ենգելսը, Լենինը և Ստալինը։ Ստալինյան եպոխայի նոր մարդիկ ԽՍՀՄ-ում՝ Լենինի և Ստալինի ամենամտերիմ աշակերտներն ու զինակիցները, Խորհրդային Միության հերոսները, ստախանովականները։ Խորհրդային պետության քաղաքացիները—Ստալինյան Սահմանադրության մեջ շարադրված իրավունքների և պարտականությունների կրողները։

Կոմունիստական դաստիարակության նպատակի գիտական և կոնկրետ լինելը։ Մարքս-լենինյան ուսմունքը մարդկային անձի բազմակողմանի զարգացման մասին։ Համ(ը)կ ծրագիրը կոմունիստական հասարակության բազմակողմանիորեն զարգացած անդամների դաստիարակության մասին։ Մարդու բազմակողմանիորեն զարգացումը որպես մտավոր կրթության, պոլիտեխնիկ կրթության, բարոյական, եստետիկական և ֆիզիկական դաստիարակության միասնական դիալեկտիկական պրոցես։

Մարքս-լենինյան ուսմունքը ժառանգականության, միջավայրի և դաստիարակության մասին։

Բուրժուական մանկավարժների կողմից առաջադրվող դաստիարակության նպատակների քննադատությունը — «մարդու դաստիարակությունն ընդհանրապես», «պատրաստել կյանքի համար» և այլն։

Մարդկային անձի զարգացման մասին բուրժուական ռեակցիոն թեորիաների քննադատությունը։ Այսպես կոչված «բիոգենետիկական օրենքը» մանկավարժության մեջ։ Ֆաշիստական գաղանային թեորիան ցեղերի անհավասարարժեքության մասին։ «Մանկաբանություն» կեղծ-գիտության գլխավոր «օրենքը»—յերեխաների բախտը ճակատագրական կերպով բիոլոգիական սոցիալական գործոններով, ժառանգականությամբ և ինչ վոր «անփոփոխ միջավայրի» ազդեցությամբ պայմանավորված լինելու մասին։

4. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

ԽՍՀՄ-ի դպրոցական աշխատողների լայն և բազմակողմանի փորձը։

Դպրոցների և ժողովրդական կրթության որգանների ու ԽՍՀՄ-ի լուսժողկոմատների դոկումենտները։

Մանկավարժական հարցերի հետազոտությունները և մոնոգրաֆիաները ԽՍՀՄ-ում։

Բուրժուական ժառանգության քննադատական վերամշակումը և ոգտագործումը։

5. ԳԻՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Գիտական մանկավարժական հետազոտության մեթոդների նկատմամբ առաջադրած սկզբունքային պահանջները. գիտական մանկավարժական հետազոտության մեթոդների ընութագրությունը — դիտելը (այդ մեթոդի առանձնահատկությունները), դոկումենտների ուսումնասիրելը, մանկավարժական հետազոտությունը, մանկավարժական եկսպերիմենտը։

Մանկավարժական հետազոտության տվյալների մշակման ստատիստիկական մեթոդը։

Մանկավարժական հետազոտման հակագիտական մեթոդների (տեստերի, անիմաստ անկետների և այլն) քննադատությունը։

6. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄՅՈՒՍ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մանկավարժությունը գիտությունների սիստեմում։ Մանկավարժական գիտությունների նպատակները, խնդիրները և բովանդակությունը։

Մանկավարժական գիտությունների սիստեմը—մանկավարժության պատմությունը, դպրոցական գիգիենան, հանրակրթական ուսումնական առարկաների դասավանդման մեթոդիկաները, մասնագիտական մանկավարժությունը (սուրդո, տիֆլո, ոլիգոֆրենո մանկավարժություն)։

Մանկավարժությունը մանկավարժական գիտությունների սիստեմում։ Մանկավարժության կապը հոգեբանության և նրան մոտիկ գիտությունների հետ։

ՄԱՍ II

ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉ ԴՊՐՈՑԸ

1. Մինչնախադպրոցական հասակի յերեխաները և նրանց դաստիարակությունը։

2. Նախադպրոցական հասակի յերեխաները և նրանց դաստիարակությունը։

1. ՄԻՆՉՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍԱԿԻ ՅԵՐԵԽԱՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մինչնախադպրոցական հասակի յերեխաների առանձնահատկությունները։ Յերեխաներին խնամելը և նրանց ֆիզիկական դաստիարակությունը մինչև մեկ տարեկան հասակը։ Փոփոխություններ յերեխայի մոտորիկայի և պսիխիկայի մեջ՝ նրա հետագա զարգացման ժամանակ։

Ֆիզիկական դաստիարակությունը, արտաքին զգացմունքների զարգացումը, յերեխայի կենսագործունեությունը, խաղը, յերեխայի ծանոթանալն իրեն շրջապատող իրականության հետ։ Յերեխայի դեպի իրեն շրջապատող աշխարհը վերաբերմունքի դաստիարակումը։ Մտածողության և լեզվի զարգացումը։ Եմոցիայի, ունակությունների, սովորությունների դաստիարակումը։ Կոլլեկտիվիզմի ելեմենտների դաստիարակումը։

Յերեխայի «բնածին եգոիզմի» մասին բուրժուական թեորիայի վոչ-գիտական և ռեակցիոն լինելը։

Ընտանիքի դերը մինչնախադպրոցական հասակի յերեխաների դաստիարակության գործում։ Համ(ք)կ և խորհրդային կառավարության հոգատարությունը մինչնախադպրոցական հասակի յերեխաների դաստիարակության նկատմամբ։ Խնամք մայրերի և յերեխաների նկատմամբ։ Մսուրների և կոնսուլտացիաների ցանցի զարգացումը։

2. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍԱԿԻ ՅԵՐԵԽԱՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախադպրոցական հասակի յերեխաների առանձնահատկությունները։

Նախադպրոցականների կենսագործունեության բովանդակությունը։ Ֆիզիկական դաստիարակությունը։ Խաղերի մանկավարժական կազմակերպումը։ Յերեխաներին շրջապատող իրականության հետ ծանոթացնելու գործի մանկավարժական կազմակերպումը։ Յերեխայի դեպի շրջապատը վերաբերմունքի դաստիարակումը։ Մտածողության և լեզվի զարգացումը։ Եմոցիայի, ունակությունների և սովորությունների դաստիարակումը։ Կոլլեկտիվիզմի ելեմենտների դաստիարակումը։ Հասարակական-քաղաքական դաստիարակության ելեմենտները։ Նախադպրոցական հասակի յերեխաների կրթական աշխատանքի ելեմենտները (ընության հետ ծանոթացնելը, գրագիտությունը, մաթեմատիկական պատկերացումները և այլն)։

Նախադպրոցականների հարցերը.—Այս ինչպես և կոչվում, այս ինչ է, ինչու։ Այդ հարցերի պատասխանների նկատմամբ մեր պահանջները։ Կրթական աշխատանքի մեթոդիկայի առանձնահատկությունները նախադպրոցական հասակի յերեխաների հետ։ Մանկական գրքերը (հեքիաթներ, պատմվածքներ, վոտանավորներ, զբաղեցուցիչ նկարներ և այլ դիդակտիկական առարկաներ)։

Նախադպրոցական հասակի յերեխաների դաստիարակման հարցում յեղած աղավաղումների քննադատությունը։ Մանկապարտեզը և նրա դերը նախադպրոցական դաստիարակության մեջ։

Ընտանիքի դերը նախադպրոցական հասակի յերեխաների դաստիարակության մեջ։ Մանկապարտեզի ազդեցությունը յերեխաների դաստիարակության վրա ընտանիքում։ Համ(ք)կ և խորհրդային կառավարության հոգատարությունը նախադպրոցական հասակի յերեխաների դաստիարակության նկատմամբ. մանկապարտեզների, հրապարակների, մանկական նախադպրոցական տների, սանատորիաների ցանցի զարգացումը յերեխաների համար։

ՄԱՍ III

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍԱԿԻ ՅԵՐԵԽԱՆԵՐԸ

Խորհրդային դպրոցի կրտսեր, միջին և բարձր տարիքի աշակերտների մանկավարժական բնութագրությունը։ Խորհրդային յերեխաների բնութագրությունը (ուսման գերազանցիկները, շքանշանակիրները, յերեխա-հերոսները, առանձնապես տաղան-

դավոր յերեխաները)։ Համկ(բ)կ առաջնորդների և ԽՍՀՄ-ի անվանի մարդկանց դպրոցական տարիները։

Վորոշ տարիքի յերեխաների անհատական և ընդհանուր առանձնահատկությունների հաշվառման նշանակությունը մանկավարժական պրոցեսում։

Համկ(բ)կ ԿԿ 1932 թ. ոգոստոսի 25-ի վորոշումը ուսումնական տարվա յուրաքանչյուր քառորդի վերջում ուսուցչի կողմից աշակերտների բնութագրման մասին։

Տվյալներ այդ բնութագրման համար (առաջադիմություն և կարգապահություն)։ Աշակերտների լավագույն դպրոցական բնութագրությունների որինակները։

Խորհրդային յերեխաների դաստիարակման պայմանները,— սոցիալիզմի յերկիրը, դաստիարակության կոմունիստական սիստեմը դպրոցում և ընտանիքում, ստալինյան սիրալիր վերաբերմունքը դեպի յերեխաները, խորհրդային յերեխաների ընդհանուր և ֆիզիկական զարգացման բարձր մակարդակը, նրանց շնորհալիությունը և տաղանդավոր լինելը։

Այսպես կոչված յերեխաների «տիպերի» թեորիայի վոչ-գիտական լինելը, վոր անց ելին կացնում բուրժուական մանկավարժները և մանկաբանական կեղծ-գիտությունը։

ՄԱՍ IV

ԽՍՀՄ-Ի ՊԵՏԱԿԱՆ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎԸՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ ՅԵՎ ԴՊՐՈՑԸ

Լենինը—Ստալինը և կուսակցական վորոշումները դպրոցի, նրա խնդիրների, ուսուցչի և աշակերտի աշխատանքի մասին դպրոցում։

Համկ(բ)կ ծրագրի պահանջները ժողովրդական լուսավորության ասպարեզում։ Խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը ժողովրդական լուսավորության և կուլտուրայի ասպարեզում։

Ցեկեղեցին պետությունից և դպրոցը յեկեղեցուց անջատելը։ ԽՍՀՄ-ի բոլոր քաղաքացիների կրթությունն ապահովող իրավունքը։

Ընդհանուր պարտադիր կրթություն մտցնելը և անգրագիտության վերացումը։ ԽՍՀՄ-ում հասունացող սերնդի ընդգրկումը

դպրոցներում։ Խորհրդային դպրոցի պատմական դերը։ Խորհրդային դպրոցի կառուցման սկզբունքները։ Տարրական և միջնակարգ դպրոցների կառուցվածքը։

Կադրերի պատրաստումը։ Միջնակարգ և բարձրագույն մասնագիտական դպրոցները, նրանց կապը հանրակրթական դպրոցների հետ։ Միջնակարգ դպրոցի աշակերտների կողմից մասնագիտության ազատ ընտրությունը։ Պետության ոգնությունը միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատությունների սովորողներին։

Դպրոցներն ու կուրսերը մեծահասակների համար։ Գիտության և տեխնիկայի տիրապետելը բանվորների և կոլխոզնիկների կողմից։

Գիտության, կուլտուրայի, դպրոցի ահաբեկումը ֆաշիզմի յերկրներում։

Առաջավոր գիտության, կուլտուրայի, դպրոցի ծաղկումը ԽՍՀՄ-ում։

ՄԱՍ V

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԹԵՈՐԻԱՆ— ԴԻԴԱԿՏԻԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մտավոր զարգացումը, ընդհանուր և պոլիտեխնիկական կրթությունը։
2. Կրթության և ուսուցման խորհրդային թեորիայի սկզբունքները։
3. Կրթության և ուսուցման բովանդակությունը խորհրդային դպրոցում (ուսումնական պլանները, ծրագրերը, դասագրքերը)։
4. Ուսումնական աշխատանքի կազմակերպումը։
5. Ուսուցման մեթոդները։
6. Աշակերտների գիտելիքների ստուգումը և գնահատականը։
7. Ուսումնական պիտույքները։

1. ՄՏԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԵՎ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Մտավոր զարգացման և կրթության նպատակները։ Մարքս-Լենինյան մտածողության աշխարհայացքի ձևավորումը, գիտության հիմունքներին տիրապետելը։ Մարքսը, Ենգելսը, Լենինը,

Ստալինը կոմունիստական կրթության բովանդակության և բնույթի մասին, հանրակրթական դիտելիքներին և լենինիզմին կայուն կերպով տիրապետելու մասին։ Լենինի—Ստալինի ուսմունքը թեորիայի նշանակության մասին։ Թեորիայի կապը պրակտիկայի հետ։ Մտավոր և ֆիզիկական աշխատանքի անջատման վոչնչացումը։

Մարքս-Լենինյան ճանաչողության թեորիան, վորպես խորհրդային դիդակտիկայի տեսական հիմքը։

Ուսուցման պրոցեսի առանձնահատկությունը համեմատած ճանաչողության պրոցեսի հետ՝ գնոսեոլոգիտական իմաստով։ Ինդուկցիայի և դեդուկցիայի, սինթեզի և անալիզի դերը մտավոր զարգացման և կրթության մեջ։

Մտավոր կրթության և զարգացման հարցերի մեկնաբանման մեջ յեղած աղավաղումների քննադատությունը։ Կեղծ-գիտական մանկաբանական թեորիաները մտավոր զարգացման և կրթության տարիքային լիմիտների մասին։ Մտավոր զարգացման և կրթության ճակատագրական նախորոշվածության ռեակցիոն ֆաշիստական թեորիան։ Մտավոր զարգացման մեջ հետ մնացող յերեխաների դատապարտվածության կեղծ-գիտական մանկաբանական թեորիան։

Լենինը և Ստալինը բուրժուական դպրոցում տարվող ընդհանուր կրթության բնույթի մասին։

Խորհրդային դպրոցի բնորոշումը, վորպես հանրակրթական և պոլիտեխնիկական (Համկ(բ)կ ծրագիրը, պար. 12, կ. 1)։ Պոլիտեխնիկական կրթության բովանդակությունը (Լենին. հատ. 30. դիտողություններ Կրուպսկայայի թեզիսների վրա՝ պոլիտեխնիզմի մասին)։

Պոլիտեխնիկական կրթությունը և գիտական հիմունքների ուսումնասիրությունը (Համկ(բ)կ ԿԿ 1931 թ. սեպտեմբերի 5-ի վորոշումը տարրական և միջնակարգ դպրոցի մասին)։

Պոլիտեխնիկական կրթության հարցում յեղած աղավաղումների քննադատությունը. դպրոցի պոլիտեխնիկացման անջատումը գիտության հիմունքների ուսումնասիրությունից, արհեստավորության և բազմարհեստության վերածելը, դպրոցի ուսուցումը գործարանային աշխատանքով փոխարինելը՝ («դպրոցը—գործարանի ցեխ»)։

Մարքսը՝ պոլիտեխնիկական կրթությունը կապիտալիզմի տիրապետության ժամանակ իրականացնելու անհնարինության մասին։

2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴԻԴԱԿՏԻԿԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Աշակերտների կողմից գիտության հիմունքների գիտակցական և կայուն յուրացումը։ Ուսուցման կապելը հասարակական-արտադրողական աշխատանքի և ֆիզիկական դաստիարակության հետ՝ վորպես միակ միջոցը պատրաստելու բազմակողմանիորեն զարգացած մարդիկ (Մարքս)։

Աշակերտների հասարակական արտադրողական աշխատանքը դպրոցի ուսումնական և դաստիարակչական նպատակներին յենթարկելը (Համկ(բ)կ ԿԿ 1931 թ. սեպտեմբերի 5-ի վորոշումը)։ Ուսուցման, կրթության և դաստիարակության կապելը պրոլետարիատի դասակարգային պայքարի և սոցիալիստական շինարարության հետ (Լենին, Ստալին)։

Ստալինի հոգատար վերաբերմունքը դեպի յերեխաները։

Դաստիարակող ուսուցում։ Դիտողականությունն ուսուցման մեջ։ Դիտողականության նշանակությունը գիտելիքների կայուն և գիտակցական յուրացման գործում։ Աշակերտների ակտիվ աշխատանքը գիտելիքների, կարողությունների և ունակությունների գիտակցական և կայուն յուրացման գործում։ Կրթության և ուսուցման ժամանակ աշակերտների տարիքային առանձնահատկության նկատի առնելը։ Ուսումնական նյութերի ուժերին ներածի համաձայն լինելը։ Ուսուցչի կողմից խորհրդային դպրոցի պրակտիկայում ստուգած ուսուցման զանազան մեթոդների գործադրելը։ Մանկավարժի առաջատար դերն ուսուցման գործում։

Կոնկրետից դեպի վերացականը, հայտնիից դեպի անհայտը, պարզից դեպի բարդը, հեշտից դեպի դժվարը—դիդակտիկական կանոնների ըմբռնումը և գործադրումը խորհրդային մանկավարժության մեջ։

Բուրժուական մանկավարժության կրթության և ուսուցման թեորիայի սկզբունքների քննադատությունը. աշակերտների գիտակցության մեջ կապիտալիստական կարգերի հավիտենականության կեղծ-գիտական գրույթի ձևակերպումը և ամրացումը, իրերի և յերևույթների մետաֆիզիկական ուսումնասիրությունը, գիտության կեղծումը և նրա ռեակցիոն քաղաքական ուղղությունը, աշակերտների գիտելիքների գիտակցական յուրացման խանգարումը, դոգմատիզմը, ֆորմալիզմն ու սխոլաստիկան գիտությունների դասավանդման և յուրացման մեջ։ Աշակերտների պասսիվ դերը գիտելիքների, կարողությունների և ունակությունների յուրացման գործում, ուսուցման կապի բացակայությունը

հասարակական արտադրողական աշխատանքի և ֆիզիկական դաստիարակության հետ, մտավոր և ֆիզիկական աշխատանքի անջատումը։

Կրթության և ուսուցման հոգեբանական-մանկավարժական հիմունքները։ Ուշադրությունը, նրա դաստիարակումը և դերն ուսուցման մեջ։ Հետաքրքրությունը, հետաքրքրության ստեղծումը ուսուցման պրոցեսում։ Հետաքրքրության դերը գիտության հիմունքների տիրապետման մեջ։ Հիշողությունը, աշակերտների հիշողության զարգացումը և կատարելագործումը. հիշողության դաստիարակումը. բերանացի անելու մեթոդների ճիշտ գործադրումը։ Ունակություններ։ Վարժությունների դերը և բնույթը. ունակությունների գիտակցական յուրացումը։ Ցերևակայությունը, նրա դերը կրթական աշխատանքի մեջ։ Ստեղծագործական յերևակայության դաստիարակումը։ Մտածողությունը. գիտության հիմունքների ուսումնասիրության առաջատար դերը մտածողության զարգացման գործում։

Դրսողականությունը, գիտական սիստեմատիզացիան դասավանդման մեջ, նրանց դերը մտածողության զարգացման գործում։ Լեզուն. գրավոր և բանավոր, տրամաբանական ճիշտ, ճշգրիտ և արտահայտիչ լեզվի զարգացումը։ Եմոցիան. նրա նշանակությունն ուսուցման և կրթության մեջ. եմոցիայի դաստիարակումը։ Կամքը. բոլշևիկյան կամքի զարգացումը ուսուցման պրոցեսում, կամքի դերն ուսուցման մեջ։

3. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ

(Ուսումնական պլաններ, ծրագրեր, դասագրքեր)

Խորհրդային դպրոցում կրթության և ուսուցման բովանդակության կախված լինելը դպրոցի ուսումնակրթական ու դաստիարակչական խնդիրներից և աշակերտների տարիքից։

Խորհրդային դպրոցի ուսումնական պլանները. ուսումնական պլանների առարկայական կառուցվածքը։

Ուսումնական պլաններում նշված հանրակրթական առարկաների ընտրության հիմունքները տարրական, թերի-միջնակարգ և միջնակարգ դպրոցների համար։

Խորհրդային դպրոցի ծրագիրը։ Խորհրդային դպրոցի գիտական-մարքսիստական առարկայական կայուն ծրագրերի կառուցման սկզբունքները։ Ծրագրերի կրթական նյութերի դիալեկտիկա-մատերիալիստական սիստեմի կազմակերպումը։

Գիտական-մարքսիստական սիստեմով շարադրված գիտության հիմնական փաստերը յուրաքանչյուր ուսումնական տարում, խիստ սահմանորոշված գիտելիքների, կարողությունների և ունակությունների պաշարը յուրաքանչյուր դպրոցական առարկայի գծով. ծրագրերի համապատասխանությունը աշակերտների տարիքին։ Առանձին առարկաների ծրագրերի փոխադարձ կապը. սոցիալիստական շինարարության նյութերը ուսումնական առարկաների դասընթացում։

Ծրագրերի կառուցման կոմպլեքսա-թեմատիկական և կոմպլեքսա-պրոյեկտային սիստեմի սկզբունքային սխալ լինելը։

Դպրոցական առարկաների դասավանդման նպատակը, խնդիրներն ու բովանդակությունը տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցներում

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.—Մայրենի լեզվի հանրակրթական նշանակությունը. աշակերտների գրագիտությունը, վորպես մայրենի լեզվի դասավանդման հիմնական խնդիրներից մեկը։ Քերականության ուսումնասիրության կրթական նշանակությունը. բանավոր և գրավոր լեզվի կուլտուրան և նրա նշանակությունը կրթության և դաստիարակության մեջ։ Սիրո դաստիարակումը դեպի մայրենի լեզուն։ Ռուսաց լեզվի դասավանդման նշանակությունը ԽՍՀՄ-ի վոչ ռուսական դպրոցներում. գրականության կրթական նշանակությունը. գրականության դերը աշակերտների ընդհանուր կրթական մտահորիզոնի լայնացման գործում։ Մայրենի լեզվի և գրականության նշանակությունը դպրոցի դաստիարակչական խնդիրների վճռման մեջ։

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՆ. — Մաթեմատիկայի դաստիարակչական և կրթական նշանակությունը. մաթեմատիկայի նշանակությունը տրամաբանական մտածողության, կամքի և բնավորության զարգացման մեջ։ Մաթեմատիկայի դերը ներկա տեխնիկայում և գիտության ուժերի տիրապետման մեջ։ Մաթեմատիկայի նշանակությունը պոլիտեխնիկական կրթության մեջ։ Մաթեմատիկական առարկաները դպրոցում և նրանց նպատակադրությունները։

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ.—Մարքսը, Ենգելսը, Լենինը, Ստալինը պատմության կրթական և դաստիարակչական նշանակության և նրա դասավանդման մասին։ Պատմության նշանակությունը մարքս-լենինյան աշխարհայացքի ձևավորման մեջ։ Ինտերնացիոնալիզմի և խորհրդային հայրենասիրության, դեպի կոմունիզմի

տական կուսակցությունն ու նրա առաջնորդները—Լենինն ու Ստալինը սիրո և նվիրվածության դաստիարակումը։ Պատմական գիտությունների նշանակությունը ուրիշ ուսումնական դիսցիպլինների ուսումնասիրության ժամանակ։ ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի և Համկ(բ)կ ԿԿ վորոշումը քաղաքացիական պատմության դասավանդման մասին ԽՍՀՄ-ի դպրոցներում։ Դիտողություններ ԽՍՀՄ-ի պատմության և նոր պատմության դասագրքի կոնսպեկտի նկատմամբ (Ստալին, Կիրով, Ժդանով). Ստալինը պատմության դասագրքի մասին։

Կառավարական կոմիսիայի ժյուրիի վորոշումը ԽՍՀՄ-ի պատմության միջնակարգ դպրոցի 3-րդ և 4-րդ դասարանների համար լավագույն դասագրքի մրցանակի վերաբերյալ։

Պատմության դասընթացի դասավանդման բաշխումն ըստ դպրոցի դասարանների։ ԽՍՀՄ-ի Սահմանադրության դասավանդումը և նրա կրթական ու քաղաքական-դաստիարակչական նշանակությունը։

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.—Աշխարհագրության կրթական և դաստիարակչական նշանակությունը մարքս-լենինյան աշխարհայացքի ձևավորման, ինտերնացիոնալիզմի և խորհրդային հայրենասիրության դաստիարակման գործում։ Այդ իսկ նպատակով ԽՍՀՄ-ի աշխարհագրության ուսումնասիրության հատուկ նշանակությունը դպրոցում։

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ.—Մարքսը, Ենգելսը, Լենինը, Ստալինը բնական գիտությունների տիրապետման նշակության մասին։ Բնագիտության կրթական և դաստիարակչական նշանակությունը դպրոցում։ Բնագիտության դերը յերեխաների մեջ մարքս-լենինյան աշխարհայացքի մշակման գործում։ Դարվինիզմի հետ աշակերտներին ծանոթացնելու նշանակությունը միջնակարգ դպրոցների ծրագրերում։

Բնագիտությունը և մարտնչող աթեիզմի դաստիարակումը։ Բնագիտության նշանակությունը պոլիտեխնիկ կրթության մեջ։ Սոցիալիստական շինարարության նյութի ոգտագործումը բնագիտության դասերին։ Բնագիտության դասընթացն ըստ դպրոցի դասարանների։

ՖԻԶԻԿԱ և ՔԻՄԻԱ.—Ֆիզիկայի և քիմիայի նշանակությունն ընդհանուր և պոլիտեխնիկական կրթության մեջ։ Ֆիզիկայի և քիմիայի նշանակությունը մարքս-լենինյան մատերիայի ձևավորման և հակակրոնական դաստիարակության գործում։

Ֆիզիկայի և քիմիայի ծառայելը սոցիալիստական շինարարությանը և ԽՍՀՄ-ի պաշտպանությանը։

Ֆիզիկայի և քիմիայի ծրագրերի հիմնական բաժինները դպրոցի տարբեր դասարաններում։

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ.—Օտար լեզուների նշանակությունն ընդհանուր կրթության համար։ Ենգելսը հնագարյան և նոր լեզուների դասավանդման մասին։ Օտար լեզուները և մայրենի լեզուն։ Օտար լեզուների դասավանդման դաստիարակչական նշանակությունը (ինտերնացիոնալ դաստիարակություն)։

ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ և ԳԾԱԳՐՈՒԹՅՈՒՆ.—Ստեղծագործական արվեստի և գրաֆիկայի նշանակությունը բազմակողմանիորեն զարգացած մարդկանց դաստիարակության և կրթության գործում։ Նկարչության դերը աշակերտների եսթետիկական դաստիարակության մեջ։ Գծագրության դերը պոլիտեխնիկ կրթության և կոնստրուկտորական գործունեության մեջ։

ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ, ՅԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՌԻԹՄԻԿԱՆ և նրանց դերը աշակերտների կրթության և եսթետիկական դաստիարակության մեջ։ Յերաժշտության և յերգեցողության ծրագրի հիմնական բաժինները տարրական յեվ միջնակարգ դպրոցում։

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ.—Ֆիզիկական կուլտուրայի դասավանդման դաստիարակչական և կրթական նշանակությունը։ Ծրագրի հիմնական բաժինները տարրական և միջնակարգ դպրոցների համար։

ԴԱՍԱԳԻՐՔԸ և նրա նշանակությունը աշակերտների ուսուցման և կրթության մեջ. Լենինը և Ստալինը դասագրքի մասին։ Դասագրքին առաջադրած պահանջները՝ նրա բովանդակության և ձևավորման ուղղությամբ։ Համկ(բ)կ ԿԿ վորոշումը տարրական և միջնակարգ դպրոցների համար դասագրքերի մասին (12 փետրվարի 1933 թ. և 7 ոգոստոսի 1935 թ.)։ Խորհրդային դպրոցի համար դասագրքեր կազմելու հարցում յեղած աղավաղումները։ Նախահեղափոխական դպրոցի լավագույն դասագրքերի բնութագրությունը։ Խորհրդային դպրոցի լավագույն դասագրքերի վերլուծումը (ԽՍՀՄ-ի պատմությունը և ուրիշները)։

4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ուսումնական աշխատանքների կազմակերպման նկատմամբ առաջադրած մանկավարժական պահանջները։ Ուսումնական տարին։ Ուսումնական տարվա բաժանումը քառորդների։ Ուսումնական որերի թիվը ուսումնական տարում։ Արձակուրդը և նրա

29775
39

տեղությունը։ Ուսումնական շաբաթը և ուսումնական որը։ Խիստ վորոշակի դասացուցակը։ Դասերի քանակը յուրաքանչյուր դասարանում։ Դասացուցակ կազմելու սկզբունքները։ Դասերի տեղությունը և դասամիջոցը։ Դասացուցակի հարցում յեղած աղավաղումների քննադատությունը։

Դասարանը. աշակերտների կայուն կազմը դասարանում. դասարանների կոմպլեկտավորման սկզբունքը։

Կեղծ-գիտության—մանկաբանության և բուրժուական մանկավարժության կողմից առաջադրած դասարանների կոմպլեկտավորման ռեակցիոն սկզբունքների քննադատությունը (մշտական բրիգադաներ և այլն)։

Խորհրդային դպրոցի ռեժիմը և ներքին կարգ ու կանոնը։ Աշակերտների ընդունելությունը դպրոցում։ Աշակերտների ընդունելության ժամանակ ուշադիր և հոգատար վերաբերմունքը դեպի ծնողները և յերեխան։

Աշակերտների փոխադրվելը մի դպրոցից մյուսը։

Դասը վորպես ուսումնական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը խորհրդային դպրոցում։ Դասերի անքակտելի կապը խորհրդային դպրոցում։ Դասերի կրթական—դաստիարակչական խնդիրները։ Դասի կառուցվածքի կախված լինելը այդ խնդիրներից։ Դպրոցական առարկայի առանձնահատկության հաշվի առնելը. դասի տեմպը։

Դասերի գիտական կլասիֆիկացիայի սկզբունքը։ Դասերի հիմնական տիպերը.—նոր գիտելիքների հաղորդումը, անցյալում հաղորդած գիտելիքների ամրացումը, աշակերտների գիտելիքների ստուգումը։ Աշակերտների աշխատանքը դասի ժամանակ՝ ուսուցչի ղեկավարությամբ։ Ուսուցչի պատրաստվելը դասին։ Դասի կոնսպեկտը և պլանը. անցկացրած դասի վերլուծումը. ցուցադրական դասերը վորպես դպրոցական աշխատանքի լավագույն փորձի փոխանակման միջոցներից մեկը։

Դասի, վորպես ուսումնական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևի բացատրման և դասը ուսուցչի հետ, կամ առանց ուսուցչի «աղատ գիտելիքներով» փոխարինելու քննադատությունը. դասի ժամանակ դաստիարակչական աշխատանքի արհամարհելը. դասը հարցնելու և հաղորդելու վերածելը։

5. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Խորհրդային դիդակտիկայի սկզբունքները վորպես ուսուցման մեթոդների և պրիոմների հիմք։

Խորհրդային դպրոցի պրակտիկայում ստուգած ուսուցման մեթոդների և պրիոմների բազմազանությունը։

Ուսուցման մեթոդների բնութագրությունը։

1. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԻ ՇԱՐԱԴՐՈՒՄԸ.—Ուսուցչի շարադրմանն առաջադրած պահանջները. շարադրման արամաբանական պլանը, ավարտված շարադրումն, շարադրման իդեոլոգիական ուղղությունը, շարադրելիքի համապատասխանելը գիտակցական ընկալման և կայուն հիշելու հնարավորություններին. լեզվի կուլտուրան և ձայնին տիրապետելը։ Դիտողականության գործադրումը ուսուցչի կողմից թեմայի շարադրման ժամանակ։ Ուսուցչի պատմելը, ուսուցչի բացատրելը, դպրոցական դասախոսությունը։

2. ԶՐՈՒՅՑԸ.—Զրույցի առարկան, զրույցի պլանը։ Հարցերը. հարցերի կախված լինելը մանկավարժական նպատակից։ Հարցերին առաջադրած պայմանները. աշակերտների պատասխաններին առաջադրած պահանջները։ Ուսուցչի կողմից զրույցի արդյունքների ընդհանրացումը։ Զրույցի ընթացքում աշակերտների ձեռք բերած նոր գիտելիքների ամրացումը։ Զրույցի ժամանակ ուսուցչի կողմից դիտողական պիտույքների գործադրումը։

Այսպես կոչված «աղատ զրույցների» քննադատությունը և զրույցը հին դպրոցում գործադրվող եվրիստիկ մեթոդով ու կատեխիզացիայով փոխարինելը։

3. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԴԱՍԱԳՐՔԻ ՀԵՏ.—Դասագրքի ոգտագործումը դասի ժամանակ։ Աշակերտների կողմից նյութերի ինքնուրույն շարադրելն ըստ դասագրքի։ Դասագրքի պատասխանը գտնելը։ Բաժնում ուսուցչի տված հարցի պատասխանը գտնելը։ Դասագրքի նյութերի կոմբինացիան՝ դրված հարցերին պատասխանելու համար։ Վարժություն կատարելն ըստ դասագրքի։ Դասագրքի նյութերը գրաֆիկ ձևով պատկերելը։ Դասագրքում շարադրած առանձին թեմաների կոնսպեկտի և պլանի կազմելը. դասագիրքը լրացնող գրքի ոգտագործումը։ Դասագրքի հետ աշակերտների ինքնուրույն աշխատելու ունակությունները։

4. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ուսուցչի ղեկավարությամբ։ Լաբորատոր պարապմունքների տարբերությունը ուսուցման մյուս մեթոդներից։ Առարկաներ, վորոնց գծով կարող են և պետք է անցկացվեն աշակերտների լաբորատոր աշխատանքները։

Աղավաղումներ լաբորատոր աշխատանքների անցկացման մեջ. բրիգադա-լաբորատոր մեթոդը։

Ուսուցման մեթոդների ընտրությունը համաձայն մանկավարժական խնդիրների։

ԵՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐ. — Դպրոցական եքսկուրսիաների կազմը դասացուցակը՝ համաձայն դասավանդման պլանի։ Եքսկուրսիաների անցկացման պլանը։ Ուսուցչի նախապատրաստվելը եքսկուրսիային։ Աշակերտների նախապատրաստվելը եքսկուրսիային։ Ուսուցչի և աշակերտների աշխատանքի մեթոդները եքսկուրսիայի ժամանակ։ Եքսկուրսիայի արդյունքների ամփոփումը դպրոցում։

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ.—Վարժությունների նպատակադրությունները։ Բանավոր, գրավոր, գրաֆիկ և տեխնիկական վարժություններ։ Տարրական և միջնակարգ դպրոցի աշակերտների վարժությունների անցկացմանն առաջադրած պահանջները։ Գրավոր աշխատանքի ուղղումը և վերլուծումը։ Գրավոր և այլ վարժությունների գերազանց կատարման կազմակերպումը։ Սխալների վերացման մանկավարժական միջոցառումները։

Վարժությունների հարցադրման մեթոդիկայում յեղած աղավաղումների քննադատությունը։ Ցուցադրումը և դեմոնստրացիան ուսուցման մեթոդների գործադրման ժամանակ։ Փորձերի, նկարների դեմոնստրացիան և պրոեկցիոն կինոյի, ստերիոսկոպի ոգտագործումը։ Դասի ժամանակ դիտողական նյութերի ոգտագործումը։ Աշակերտների տնային աշխատանքները և նրանց կատարելը։ Աշակերտներին տնային աշխատանք տալու մեթոդիկան։ Առաջադրության և նրա լուծման ճանապարհների պարզ լինելը աշակերտների համար։ Աշակերտների տնային աշխատանքի կապը դասի աշխատանքի հետ։ Ուսուցչի կողմից աշակերտներին ցույց տալիք ոգնությունը տնային աշխատանքների կատարման ընթացքում։

Աշակերտների հետ տնային աշխատանքների ստուգումը և վերլուծումը դասարանում։

Լրացուցիչ պարապմունքներ աշակերտների հետ։ Այդ պարապմունքների կազմակերպումը դասի ժամանակ և դասից հետո ուսուցչի ղեկավարությամբ։ Հետ մնացող աշակերտների ոգնության կազմակերպումը։

6. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ ՅԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Դպրոցական աշխատանքի հաշվառման հիմունքները։ Աշակերտների գիտելիքների հաշվառման պլանը և մեթոդիկան։ Աշակերտների առաջադիմության հաշվառման ստանդարտացրած մեթոդների քննադատությունը—տեստեր և այլն։

Աշակերտների գիտելիքների գնահատականը, գնահատականի նորմաները (չափանիշը)։ Տարեվերջի ստուգողական քննությունները և նրանց պատրաստելը։

Աշակերտների առաջադիմության ցուցանիշները։

Անհառաջադիմության պատճառների քննարկումը։ Ցերկտարեցիության պատճառները։ Ցերկտարեցիության վերացման միջոցները. աշակերտների լրացուցիչ աշխատանքը ամառային արձակուրդի ժամանակ։

Ռեակցիոն մանկաբանության թեորիայի քննադատությունը ցերկտարեցիության անխուսափելիության մասին։

7. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ

Դպրոցական պիտույքների առաջ դրած դիդակտիկական պահանջները և նրանց գործադրումը ուսումնական աշխատանքում։ Պիտույքների ընտրությունը թեմաների մշակման համար։ Պիտույքների դեմոնստրացիայի պրոցեսները դասի ժամանակ։ Աշակերտների աշխատանքը պիտույքների հետ։ Դպրոցական պիտույքների տիպերը. տպագրած դպրոցական պիտույքներ։ Դպրոցական կահավորանքը, մոդելներ, դպրոցական կոլեկցիաներ։ Յուրաքանչյուր տվյալ տեսակի պիտույքներին առաջադրված մանկավարժական և մեթոդական պահանջները։

ՄԱՍ VI

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԹԵՈՐԻԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Կոմունիստական բարոյականության դաստիարակումը.—հակակրոնական դաստիարակությունը. ինտերնացիոնալ դաստիարակությունը. սոցիալիստական հայրենասիրության դաստիարակությունը. բոլշևիկյան զգոնության դաստիարակումը. գիտակցական կարգապահության և դեպի աշխատանքն ու սոցիալիստական սեփականությունը կոմունիստական վերաբերմունքի դաստիարակումը. սոցիալիստական հումանիզմի և դեպի սոցիալիստական հանրակեցության կանոնները գիտակից վերաբերմունքի դաստիարակումը։

2. Բոլշևիկյան կամքի և բնավորության դաստիարակումը։
3. Ֆիզիկական դաստիարակությունը։
4. Եստետիկական դաստիարակությունը։

Դաստիարակության, կրթության և ուսուցման կապը։ կրթական աշխատանքի դաստիարակչական նշանակությունը։ Դաստիարակության խնդրի կոնկրետ լինելը։ Ուսուցիչը վորպես դաստիարակիչ։ Դասարանի ղեկավարը և նրա դաստիարակչական դերը։ Դպրոցի և ընտանիքի, կոմյերիտ և պիոներական կազմակերպությունների դաստիարակչական աշխատանքի համաձայնեցումը։

1. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մարքսը, Ենգելսը, Լենինը, Ստալինը կոմունիստական բարոյականության մասին։ Կոմունիստական բարոյականության դաստիարակումը հասունացող սերնդի մեջ։ Մարքսիզմի-լենինիզմի հիմնադիրները բուրժուական բարոյականության մասին։ Ակտիվ պայքար բուրժուական բարոյականության դեմ։ Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքի կուսակցականությունը։

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ.—Համկ(բ)կ ծրագրի պահանջները կրոնական հարաբերությունների ասպարեզում (պարագրաֆ 13)։ Հակակրոնական պրոպագանդայի ազատությունը ԽՍՀՄ-ում (ԽՍՀՄ Սահմանադրության 124-րդ հոդվածը)։ Կրոնական հայացքների մերկացումը։ Դիտական-մարքսիստական հայացքների դաստիարակումը և ամրացումը։ Մարտնչող աթեիզմի դաստիարակումը դպրոցում. այդ խնդիրների լուծման միջոցները աշակերտների հետ՝ դասերի և արտադասարանական աշխատանքների ժամանակ (նյութերի ընտրության միջոցով—դասի ժամանակ, հակակրոնական գրականության ընթերցումը, եքսկուրսիա դեպի հակակրոնական թանգարանը, մարտնչող անաստվածների բջջի կազմակերպումը և այլն)։

«Անկրոն դաստիարակության» ոպորտունիստական թեորիայի քննադատությունը, վորպես կրոնական դաստիարակության յուրահատուկ ձևը։

Ցերիտասարդության կրոնական դաստիարակությունը կապիտալիստական յերկրներում։

ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ.—Կոմունիստական Ինտերնացիոնալի և Համկ(բ)կ ծրագրերի պահանջները ազգային հարաբերությունների ասպարեզում։ Ստալինյան Սահմանադրությունը ԽՍՀՄ-ի քաղաքացիների իրավական հավասարության մասին (հոդվ. 123). Լենինյան ինտերնացիոնալիզմի դաստիարակումը։

Ինտերնացիոնալ դաստիարակության դպրոցական խնդրի կատարման միջոցները։

Աշակերտներին ծանոթացնելը խորհրդային իշխանության ազգային քաղաքանության, ԽՍՀՄ-ի ժողովուրդների ազգային կուլտուրայի, նրանց պատմության (տնտեսության, գրականության, արվեստի), Համկ(բ)կ պատմության, ԽՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման և դասակարգային պայքարի փորձի հետ։

Հատուկ կազմակերպված արտադպրոցական աշխատանք (ՄՈՊՐ-ի բջիջ, ինտերնացիոնալ յերեկույթներ, ընթերցանություն, թատրոն, կինո-նկարներ և այլն)։

Պայքար տեղական նացիոնալիզմի և վելիկոռուսական շովինիզմի թեքումների դեմ դպրոցում։

Ազգային թշնամանքի բորբոքումը, վորպես բուրժուական դաստիարակության հիմնական ելեմենտը։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ.—Անսահման սիրո դաստիարակումը դեպի սոցիալիստական հայրենիքը, կոմունիստական կուսակցությունը, խորհրդային կառավարությունը, ԽՍՀՄ-ի ժողովուրդների մեծ ղեկավար ՍՏԱԼԻՆԸ։ Հայրենիքի պաշտպանման և դեպի նրա վիճակը պատասխանատվության դաստիարակումը։ Խորհրդային հայրենասիրության դաստիարակման դպրոցական խնդրի լուծման միջոցները։

Սոցիալիստական կարգերի և նոր մարդկանց հաջողությունները. կոմունիզմի կառուցումը և դասակարգային պայքարի ցուցադրումը, դեպի դասակարգային թշնամին ակտիվ ատելության և վրեժխնդրության դաստիարակումը. բոլշևիկյան զգոնության դաստիարակումը։

Սոցիալիզմի յերկրի պաշտպանության պատրաստակամության և կարողության դաստիարակումը։ ԽՍՀՄ-ի հայրենասերների հերոսության, գործունեության և կյանքի հետ ծանոթացնելը։ Կրթական նյութի բովանդակությունը և ուղղությունը դասի ժամանակ։ Եքսկուրսիաների անցկացումը (ԽՍՀՄ-ի աշխատավորների դասակարգային պայքարի և սոցիալիզմ կառուցելու հետ ծանոթացնելը), հատուկ կազմակերպած արտադպրոցական աշխատանքը (համապատասխան գրականության ընթերցումը, կինո-նկարների և պիեսաների ցուցադրումը և այլն)։ Աշակերտ-

ների ուժերի ներածին չափ մասնակցելը սոցիալիստական շինարարության գործում։

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԶԳՈՆՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄԸ.—Լենինը և Ստալինը սոցիալիզմի կառուցողների բոլշևիկյան զգոնության մասին. զգոնությունը—խորհրդային հայրենասերների ամենագլխավոր վարակներից մեկը։ Թշնամիներին ճանաչել կարողանալը և սոցիալիստական հայրենիքի շահերի պաշտպանելը։

Բոլշևիկյան զգոնության դաստիարակումը աշակերտների մեջ դպրոցում և ընտանիքում։ Զգոն վերաբերմունք դեպի մարդիկ և նրանց գործունեությունը, դեպի իր հարաբերությունները և իր աշխատանքը։ Հասունացածների և յերեխաների զգոն վերաբերմունքի որինակներ։

ԳԻՏԱԿՑԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄԸ. — Լենինը և Ստալինը գիտակցական կարգապահության դաստիարակման մասին։

ԽՍՀՄ-ի Ստալինյան Սահմանադրությունը խորհրդային քաղաքացիների գիտակցական կարգապահության մասին։ Խորհրդային դպրոցականների գիտակցական կարգապահությունը։ Դպրոցի սիստեմատիկ աշխատանքը՝ գիտակցական կարգապահությունը դպրոցում և դպրոցից դուրս դաստիարակելու ուղղությամբ։ Աշակերտների ռեժիմի կարգ և կանոնին հետևելը դպրոցում և ընտանիքում։ Աշակերտների վարքի կանոնները դպրոցում և նրանից դուրս (դպրոցի կանոնադրությունը)։ Գիտակցական կարգապահության որինակների ցուցադրումը աշակերտների կողմից, մասնավորապես պիոներների և դպրոցականների կարգապահության ցուցադրումը։ Ուսուցչի անձնական որինակը։ Խրախուսանքի միջոցները և նրանց նշանակությունը աշակերտների առաջադիմության բարձրացման և կարգապահության դաստիարակման գործում։ Տուժի միջոցները խորհրդային դպրոցում։ Ֆիզիկական ներգործման միջոցների հակամանկավարժական նշանակությունը. այդ միջոցների լիակատար արգելելը։

ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի և Ժողկոմխորհի վորոշումը անչափահասների մեջ տեղի ունեցող հանցագործությունների դեմ պայքարելու միջոցների մասին։

Կարգապահության դաստիարակման թեորիաների քննադատությունը բուրժուական մանկավարժության մեջ։

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄԸ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ.—Լենինը և Ստալինը կոմունիստական աշխատանքի

մասին. ԽՍՀՄ-ի Ստալինյան Սահմանադրությունը սոցիալիստական աշխատանքի մասին (հոդված 12)։ Դպրոցի և ընտանիքի կողմից աշակերտների աշխատանքի և հանգստի կազմակերպումը։ Դպրոցի և ընտանիքի աշխատանքային ռեժիմի ճիշտ կազմակերպումը յերեխաների և հասակավորների կողմից։ Աշակերտների աշխատանքի կայուն դասացուցակը դպրոցում և տանը։ Աշակերտների աշխատանքի ճիշտ կազմակերպումը դասի ժամանակ։ Աշակերտների կոլլեկտիվ աշխատանքների ձևերը դպրոցում և դպրոցից դուրս։ Այդ ձևի զարգացման անհրաժեշտությունը (Համկ(բ)Կ ԿԿ 1932 թ. ոգոստոսի 25-ի վորոշումը)։

Աշխատանքի մեջ տեսական պատրաստականության գործադրման կարողության դաստիարակումը։ Աշխատանքի սոցիալիստական մեթոդներին տիրապետելու կարողության դաստիարակումը. ինքնաքննադատությունը, սոցիալիստական մրցումը աշխատանքի մեջ. հարվածայնությունը, աշխատանքի ստախանովյան մեթոդները (հարվածայինները դպրոցում)։

Տեխնիկայի ճիշտ ոգտագործումը։ Տեխնիկայի ստեղծագործական տիրապետումը։ Աշակերտների աշխատանքի որինակների ցուցադրումը դպրոցում և տանը (դպրոցի առաջադրությամբ). աշակերտների հասարակական աշխատանքի կազմակերպումը, այդ աշխատանքի կատարման ղեկավարումը և ոգնությունը։

Լենինը և Ստալինը սոցիալիստական սեփականության և դեպի այդ սեփականությունը վերաբերմունքի մասին։ ԽՍՀՄ-ի Ստալինյան Սահմանադրությունը սոցիալիստական սեփականության և դեպի այն վերաբերմունքի մասին։ Աշակերտների վերաբերմունքը դեպի սոցիալիստական սեփականության պաշտպանությունը, դպրոցի աշխատանքների մեջ մասնակցություն ցույց տալը, խնամատար վերաբերմունք դեպի իր սեփական իրերը։

Դեպի սոցիալիստական սեփականությունը յերեխաների ցույց տված վերաբերմունքի որինակները։

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻԶՄԻ ՅԵՎ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿԵՑՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՔՆԵՐԸ ԳԻՏԱԿՑԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄԸ.—Սոցիալիստական հումանիզմի էությունը։ Մարքսիզմի հիմնադիրները շիտակության և անկեղծության, կոլլեկտիվիզմի, ընկերականության և մտերմության մասին։ Աշակերտների կողմից իրենց աշխատանքի մեջ և հարաբերություններում բոլշևիկյան շիտակություն պահպանելը։ Կոլլեկտիվիզմի, մտերմության և ընկերականության դաստիարակությունը։ Աշակերտների կողմից մտերիմների ընտրումը։ Դեպի

սոցիալիստական հանրակեցության որենքները հարգանքի դաստիարակումը դպրոցում և ընտանիքում։

Պայքար յերեխաների անխնամության դեմ։

2. ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿԱՄՔԻ ՅԵՎ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄԸ

Լենինը և Ստալինը բոլշևիկյան կամքի և բնավորության մասին.—կոմունիստական սկզբունքայնությունը, հավատ սեփական ուժերի մեջ, կենսունակություն, վճռականություն, կայունություն, համառություն, տոկունություն, համարձակություն, հերոսություն։

Մարքս-Լենինյան աշխարհայեցողության դերը կամքի և բնավորության դաստիարակման մեջ։

Աշակերտների կամքի և բնավորության զարգացումը դպրոցում և ընտանիքում, դասարանական, արտադասարանական և արտադպրոցական պարապմունքների ժամանակ, խաղերի ու սպորտի ժամանակ և այլն։

Աշակերտների կողմից ցույց տված բոլշևիկյան կամքի և բնավորության որինակների ցուցադրումը։

3. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մարքսը և Լենինը ֆիզիկական դաստիարակության մասին։ Ֆիզիկական դաստիարակության տեղը սոցիալիզմի բազմակողմանիորեն զարգացած շինարարներ պատրաստելու գործում։

Համկ(բ)կ ԿԿ 1932 թ. ապրիլի 21-ի վորոշումը («Պիոներական կազմակերպությունների աշխատանքի մասին») առողջ փոխարինողներ պատրաստելու պայքարի մասին։ Աշակերտների որգանիզմի լրիվ և առողջ զարգացման պայմանները։ Դպրոցական աշխատանքի սանիտարա-առողջապահական ռեժիմը։

Առողջապահական ունակությունների դաստիարակումը։ Ֆիզկուլտուրան խորհրդային դպրոցում։

Արտադպրոցական առողջապահական աշխատանքները։

Առողջապահական աշխատանքներն աշակերտների հետ արձակուրդների ժամանակ։ Առողջապահական դպրոցները։ Խորհրդային դպրոցների աշակերտների նախապատրաստվելը բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետության պաշտպանության համար։

Տղաների և աղջիկների միատեղ ուսուցումը և դաստիարակությունը։ Միատեղ դաստիարակության սկզբունքը խորհրդային

դպրոցում։ Տղամարդը և կինն ընկերներ են կոմունիզմի համար մղած դասակարգային պայքարում։

Բարոյական և ֆիզիկական դաստիարակության կապը խորհրդային դպրոցում։

4. ԵՍԹԵՏԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մարքսիզմի հիմնադիրները եսթետիկական դաստիարակության մասին։ Արվեստը, վորպես զգացմունքների, մտքի և կամքի դաստիարակման միջոց։

Եսթետիկական դաստիարակությունը մարդու բազմակողմանի զարգացման մեջ։ Եսթետիկական դաստիարակության խնդիրները խորհրդային դպրոցում։

Եսթետիկական դաստիարակության խնդիրների կիրառման միջոցները (գրականության, յերաժշտության, յերգեցողության, նկարչության և այլն դասավանդումը)։ Արտադպրոցական միջոցառումներ։

ՄԱՍ VII

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՅԵՎ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ—ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՀԼԿՅԵՄ կազմակերպությունը դպրոցում։

ՀԼԿՅԵՄ կազմակերպությունների խնդիրները դպրոցում։

ՀԼԿՅԵՄ ծրագրի պահանջները դպրոցում և յերեխաների միջև տանելիք աշխատանքների ասպարեզում։

Պիոներական կազմակեկպությունը դպրոցում. նրա կառուցվածքը։

Համկ(բ)կ և կոմսոմոլի կողմից դեպի պիոներական կազմակերպության խնդիրները ցույց տված ղեկավարությունը դպրոցում։

Կոմյերիտական և պիոներական կազմակերպության աշխատանքների բովանդակությունը և մեթոդները դպրոցում։

Քաղաքական-դաստիարակչական աշխատանքը։

Պայքար աշակերտների բարձր առաջադիմության և գիտակցական կարգապահության համար։

Առողջապահության, պաշտպանության և ֆիզկուլտուրային աշխատանքները։

Աշխատանքի սոցիալիստական մեթոդների պրոպագանդան։ Հանդստի և զվարճության կազմակերպումը. կոմյերիտական կազմակերպիչները և պիոներական կոլվարը դպրոցներում։ Նրանց աշխատանքի բովանդակությունը և մեթոդները։

2. Աշակերտական կազմակերպությունները խորհրդային դպրոցում—տարրական դպրոցում (1—3 և 4 դասարաններում), միջնակարգ դպրոցում (5—7, 8—10-րդ դասարաններում), նրանց խնդիրները, աշխատանքի բովանդակությունը և մեթոդները։

ՄԱՍ VIII

ԴՊՐՈՑԸ ՅԵՎ ԸՆՏԱՆԻՔԸ

Խորհրդային ընտանիքը։ Յերեխաների դաստիարակման խնդիրները խորհրդային ընտանիքում։ Ընտանիքում յերեխաների ռեժիմի սահմանելը՝ հաշվի առնելով նրանց տարիքը, սիստեմատիկաբար հետևելը։

Աշակերտների անխնամության վերացումը ընտանիքի և դպրոցի կողմից։

Դպրոցի խնդիրները ծնողների մեջ մանկավարժական պրոպագանդա մղելու ուղղությամբ։

Դպրոցի և ընտանիքի կապի ձևերը։

Ընտանիքի ազդեցությունն ընկերների կոլեկտիվի ընտրության մեջ։ Աշակերտների դաստիարակումն ընտանիքում մյուսների որինակով։

Աշակերտներին ընտանիքում ոգնելը՝ դպրոցի առաջադրությունների կատարման գործում։

Ընտանիքի մասնակցությունը աշակերտների արտադպրոցական աշխատանքի, նրանց հանդստի և զվարճալիքների կազմակերպման մեջ։

ՄԱՍ IX

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՅԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ

Աշակերտների հետ արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների խնդիրները։

Աշակերտների պահանջները գիտության, տեխնիկայի, արվեստի, ֆիզկուլտուրայի և սպորտի ասպարեզում բավարարելը և ստիմուլ ստեղծելը։

Աշակերտների հասարակական-քաղաքական զարգացումը՝ նրանց հետ արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներ տանելու ընթացքում։

Աշակերտների հետ արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների յենթարկելը դպրոցի ուսումնա-դաստիարակչական նպատակներին։

Աշակերտների ընթերցանության կազմակերպումը։ Յերեխաների և պատանիների համար գրականությունը, գրականության ցուցակների կազմելը աշակերտների և ուսուցիչների համար ըստ դասարանների։

Աշակերտների ընթերցանության կազմակերպումը՝ դպրոցական առարկաների ուսումնասիրության կապակցությամբ։

Յերեխաների դպրոցական և արտադպրոցական գրադարանների կազմակերպումը և աշխատանքը։

Աշակերտների ոդակային աշխատանքի կազմակերպումը։ Ոդակների տեսակները։ Կրուժոկային (ոդակային) աշխատանքի ծրագիրը։ Աշակերտների ակտիվությունը և ինքնագործունեությունը ոդակային աշխատանքի մեջ։

Ընթերցանության, յերեկույթների, ցերեկույթների կազմակերպումը և նրանց դաստիարակչական ու կրթական նշանակությունը։

Արտադպրոցական աշխատանքը աշակերտների հետ։ Մանկական տեխնիկական կայանների, կաբինետների, լաբորատորիաների կազմակերպումը։ Տարբեր տարիքի յերեխաների տեխնիկական հետաքրքրությունների և պահանջների բազմազանությունը։

Տեխնիկայի ուսումնասիրության գծով աշակերտների արտադպրոցական աշխատանքի կապը դպրոցական առարկաների—մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, բնագիտություն, աշխարհագրություն և այլն—ուսումնասիրության հետ։

Աշակերտների կոնստրուկտորական և գյուտարարական աշխատանքը։

Կինո-աշխատանքը աշակերտների հետ։ Դպրոցական և արտադպրոցական կինոների կազմակերպումը։ Կինո-նկարների ընտրությունը դպրոցի դաստիարակչական և կրթական խնդիրների տեսանկյունով։

Կինո-սեանսների տևողությունը։ Աշխատանքը աշակերտների հետ՝ կինո-նկարը դիտելուց հետո։

Թատրոնի աշխատանքը աշակերտների հետ։ Մանկական թատրոնների կազմակերպումը և յերեխաների համար պիեսների բեմադրումը մեծերի թատրոններում։

Յերեխաների համար պիեսաների ընտրությունը՝ դաստիարակչական և կրթական խնդիրների տեսանկյունով։

Աշխատանքը աշակերտների հետ՝ մինչ պիեսան դիտելը։

Դպրոցական թատերական բեմադրության կազմակերպումը աշակերտների մասնակցությամբ։

Աշխատանքն աշակերտների հետ պիոներական տներում։

Պիոներական տների խնդիրները. նրանց աշխատանքի բովանդակությունը և մեթոդները։

Առողջապահական աշխատանքը աշակերտների հետ։

Լժային կայանների և սահնակների կազմակերպումը ձմեռային սեզոնում։

Մանկական հանգստի տների և սանատորիաների աշխատանքը։ Ամառային սեզոնում պիոներական լագերի կազմակերպումը։

Լագերներում մանուկների հետ աշխատանքի բովանդակությունը և մեթոդները։

Առողջապահական հրապարակները, նրանց կազմակերպումը, աշխատանքի բովանդակությունն ու մեթոդները։

Աշակերտների հեռավոր եքսկուրսիաների և ճանապարհորդության կազմակերպումը։ Կուլտուրայի և հանգստի մանկական պարկերը։ Մանկական սանատորիաները և հանգստի տները։

ՄԱՍ X

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Լենինը, Ստալինը և կուսակցական վորոշումները խորհրդային դպրոցի ուսուցչի մասին. «Ժողովրդական ուսուցիչների ֆալանգը կազմում է սոցիալիզմի հիման վրա նոր կյանք կառուցող մեր յերկրի աշխատավորների մեծ բանակի ամենաանհրաժեշտ մասերից մեկը» (Ստալին)։ Համ(ա)կ, խորհրդային կառավարության և խորհրդային հասարակության հոգատարությունն ուսուցչի մասին։

Խորհրդային դպրոցի ուսուցիչը ԽՍՀՄ-ության անվանի քաղաքացին է։

Ուսուցչի ղեկավար դերը դպրոցում։ Ուսուցչի պատասխանատու և պատվավոր պարտականությունները ԽՍՀՄ-ում։

Կոմունիստական դաստիարակության, կրթության և ուսուցման խնդիրներն իրականացնելու համար անհրաժեշտ ուսուցչի վորակները—մարքս-լենինյան կրթությունը, բոլշևիկյան տիրապետելը, բոլշևիկյան վորակների դաստիարակումը, ավանդող առարկային խորապես տիրապետելը, մանկավարժական պատրաստականությունը։ Ստալինյան հումանիզմը վորպես ուսուցչի կողմից դեպի յերեխաները ցույց տված վերաբերմունքի հիմք։

ԽՍՀՄ-ի մանկավարժական գործի աչքի ընկնող վարպետների ընութագրությունը։

Ուսուցիչների պատրաստման սիստեմը ԽՍՀՄ-ում։ Խորհրդային դպրոցների ուսուցիչների կրթության բարձրացման և կատարելագործման հաստատությունները։

Դպրոցի աշխատանքի ղեկավարումը։

Ուսուցչի ճնշված վիճակը բուրժուական հասարակության մեջ, մանավանդ ֆաշիզմի յերկրներում։

ՄԱՍ XI

ԴՊՐՈՑԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Դպրոցի ղեկավարությունը.
2. Դպրոցական շենքը և նրա կահավորումը։

1. ԴՊՐՈՑԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ.— Դպրոցական կանոնադրությունը վորպես ղեկավար փաստաթուղթ դպրոցի կյանքին և աշխատանքին վերաբերվող հարցերի մասին։ Դպրոցի կառավարումը. դպրոցի դիրեկտորը, նրա իրավունքներն ու պարտականությունները։ Դպրոցի միանձնյա կառավարումը։ Դպրոցի դիրեկտորի ոգնականը—ուսումնական բաժնի վարիչը։

Ուսումնական բաժնի վարիչի իրավունքներն ու պարտականությունները։

Ուսուցիչների, դասարանի ղեկավարների, կոմսոմոլի կազմակերպչի, պիոներական բաղավարի իրավունքները և պարտականությունները։

Դպրոցական բժիշկը և նրա իրավունքներն ու պարտականությունները դպրոցում։

Մանկավարժական խորհուրդը. նրա աշխատանքի բովանդակությունը։

Դպրոցների մեթոդական կազմակերպությունները։ Դպրոցի աշխատանքների պլանավորումը։ Դպրոցի ուսումնա-դաստիարակչական աշխատանքի ընթացքի սիստեմատիկ հսկողության կազմակերպումը։ Ժողովրդական լուսավորության որգանները։ Լուսժողկոմատների կողմից դպրոցին մանկավարժական ոգնության գործի կազմակերպումը։

Դպրոցական աշխատանքի հրահանգումը. հրահանգչին առաջադրած պահանջները։

Դպրոցական հաշվետվությունը։ Դասարանական մատյանը, աշակերտների որագրերը, դրանց վարելու կարգը։ Ուսուցիչների, դասարանական ղեկավարների հաշվետվությունը։

Դպրոցի աշխատանքի արդյունքների ամփոփումն ըստ ուսումնական տարվա քառորդների։ Դպրոցական բյուջեն, տնտեսությունը և դպրոցի գործավարությունը։ Դպրոցի տարեկան հաշվետվությունը։

Դպրոցին կից ծնողական կոմիտեն, նրա իրավունքները և պարտականությունները։

Դպրոցի հաշվետվությունը հասարակայնության առաջ։

2. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇԵՆՔԸ և ՆՐԱ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ.—Դպրոցական շենքի և նրա տեղի նկատմամբ առաջադրած մանկավարժական և սանիտարա-առողջապահական պահանջներ։

Դպրոցի դասարանական սենյակների և մյուս քերի նկատմամբ առաջադրած պահանջները։

Դպրոցի կահավորումը, կահ կարասիքը—ս լտերը, դասարանական գրատախտակը, ուսուցիչների համա եղանները, պահարանները։

Ուսումնական կաբինետների, լաբորատորիաների, ֆիզկուլտուրային պարապմունքների անցկացման դահլիճի, անկյունների կահավորումը։

Դպրոցի ներքին կահավորումը։

Կենդանի անկյունը դպրոցում, դպրոցական ոգերևութաբանական կայանը, դպրոցակից հողամասը, հատուկ դպրոցական կաբինետները—ֆիզիկական, քիմիական, բնագիտական և այլն։

Դպրոցական ցուցահանդեսները, աշակերտական աշխատանքների թանգարանները։

Ուսուցիչների համար մեթոդական դպրոցական կաբինետները, դպրոցական գրադարանները։ Այդ գրադարաններում աշակերտների աշխատանքի կազմակերպումը և մեթոդիկան։

Институт повышения квалификации и заочного педобразования

ПРОГРАММА ПО ПЕДАГОГИКЕ

◆

Издательство Наркомпроса АзССР
Баку—1939.

ՀԱՅԿ-ՍՍՀ Մ. Ա. Մեսրոպյան անվան գրադարան

ՀՀ Ազգային գրադարան
NL0215992

44 634